

Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ. Գ. ՀԱԿՈԹՅԱՆ

Հայաստանում սովետական իշխանության տարիներին մեծ հնարավորություններ ստեղծվեցին ինչպես հայոց լեզվի վարդաքման, այնպես էլ նրա բազմակողմանի ուսումնասիրության համար:

Հիսուն տարիների ընթացքում հայերենագիտությունը հասավ նշանակալից հաջողությունների: Լեզվաբանության գրեթե բոլոր հիմնական բնագավառներում այսօր մենք ունենք ծանրակշիռ ուսումնասիրություններ, որոնք վկայություն են հայերենագիտության բարձրաստիճան վարդաքման:

Հայոց լեզվի պլաւմու-համեմատական ուսումնաւիրություն. Համեմատական լեզվաբանության հիմնադրումով XIX դ. երկրորդ քառորդից սկզբնավորվեց նաև հայերենի գիտական ուսումնասիրության բուն պատմությունը: Հայերենի լեզվանյութը քննվեց նոր մոտեցմամբ, իր բոլոր մանրամասներով ու ամբողջության մեջ (հնչյունաբանություն, բառապաշար, ձևաբանություն, շարահյուսություն): Առաջադրվեցին ու դրականորեն լուծվեցին հայերենի պատմության ու համեմատական քերականության մի շարք կարևոր ու սկզբունքային հարցեր: Մեկից ավելի փորձեր արվեցին պարզելու հայերենի ցեղակցությունն ու հնդեվրոպական լեզվաընտանիքում նրա զբաղված դիրքը, հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների փոխհարաբերությունների բնույթը: Սովետական շրջանում հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության բնագավառը հարստացավ նորանոր ուսումնասիրություններով, որոնք արժանացան համընդհանուր ուշադրության: Այս մարզում ամենաբեղմնավորները եղան Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը:

Հայ լեզվաբանության գլուխ-գործոցներից է Հ. Աճառյանի հայոց լեզվի երկհատոր պատմությունը¹, ուր քննվում է հայերենի կազմավորման հարցը՝ հնդեվրոպական միասնության շրջանից մինչև մեր օրերը՝ զրաբարի, միջին զրական հայերենի, բարբառների ու աշխարհաբարի ընդգրկումով: Հատուկ ուշադրություն է դարձվում պատմական տարրեր ժամանակաշրջաններում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխություններին ու դրանց օրինաչափություններին, ազգակից և ոչ ազգակից լեզուների հետ հայերենի բառապաշարային աղերսին և այլն: Քննվում են նաև միջին զրական հայերենի կազմավորման, աշխարհաբարի կամ նոր հայերենի նախապատմությունը հարցերը և այլն: Հայ լեզվաբանության համար սկզբունքային նշանակություն ունեն գրքի այն գլուխները, որոնք նվիրված են համահնդեվրոպական նախաշրջանին, հնդեվրոպական բարբառների մեջ հայերենի դիրքին, հայերենի բարբառների ծագման ժամանակաշրջանին:

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1—2, Երևան, 1941, 1951:

Հայոց լեզվի պատմության և պատմա-համեմատական քերականության բնագավառում մի ծանրակշիռ աշխատություն է Հ. Աճառյանի «Լիակատար քերականությունը»՝ ծրագրված 10 մեծածավալ հատորով և ընդարձակ ներածությամբ²։ Խոսքի մասերի քննությունը պարունակող հատորներում նյութի ուսումնասիրությունը կատարված է համակողմանի ընդգրկումով, որով այդ աշխատությունը ըստ էության դարձել է տարբեր տիպի քերականությունների համահավաք մի ամբողջություն։ Լեզվական տվյալ երևույթն իր դրսևորման մանրամասներով ցուցադրված է նախ հայերենի հետ համեմատվող ոչ աղգակից լեզուներում (սա ղուգադրական-տիպաբանական քննություն է, որ ունի ընդհանուր լեզվաբանական արժեք), ապա՝ նույն երևույթը հնդեվրոպական լեզուներում՝ նախալեզվից սկսած (հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունն է)։ սրան հաջորդում է բուն հայերենի նյութի քննությունը՝ մի կողմից՝ դրա և հնդեվրոպական լեզուների համեմատությամբ, մյուս կողմից՝ այդ երևույթի արտահայտությունը դրաբարից մինչև ժամանակակից դրական հայերեն (հայոց լեզվի պատմությունն ու պատմա-համեմատական քերականությունն է)։ Արմատական բառարանի և «Հայոց լեզվի պատմության» հետ «Լիակատար քերականությունը» հանրագումարի բերեց այն, ինչ հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության մեջ կատարված էր Հ. Աճառյանից առաջ։

Գ. Ղափանցյանի գիտական հարուստ ժառանգությունը աչքի է ընկնում իր բաղմակողմանիությամբ։ Խորաթափանց գիտնականը մեծ ավանդ ունի հայոց լեզվի, հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմության հին և հնագույն շրջանների հետազոտության բնագավառում։ Հայագիտության մեջ առաջինը նա՝ լուրջ քննության առարկա դարձրեց մի ամբողջ շարք կարևորագույն խնդիրներ, բաղմաթիվ արժեքավոր աշխատություններով³ ընդարձակեց հայերենի պատմա-համեմատական քերականության շրջանակները, գիտական շրջանառության մեջ մտցրեց փաստական հարուստ նյութ, բաղմակողմանիորեն հետազոտեց հայերի և Հայկական լեռնաշխարհում բնակված հնագույն այլ ժողովուրդների (խեթեր, ուրարտացիներ, խուռիներ և այլն), ինչպես նաև կովկասյան ժողովուրդներից մի քանիսի (վրացիներ, մեգրելներ, լազեր և այլն) լեզվական և պատմա-մշակութային կապերն ու ընդհանրությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն հայոց լեզվի ցեղակցության պարզաբանման համար։

Հայոց լեզվի ծագման և բնույթի վերաբերյալ Գ. Ղափանցյանը պաշտպանում էր հայերենի երկսեռ՝ խառնածին լեզու լինելու գաղափարը. նկատի առնելով հայերենի մեջ ոչ հնդեվրոպական և ոչ հայկական-հնդեվրոպական լեզ-

2 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների. Ներածություն, Երևան, 1955, հատ. 1, Ածական և թվական (1952), հատ. 2, Դերանուն (1952), հատ. 3, Գոյական (1957), հատ. 4, գիրք Ա, Բ, Բայ (1959, 1961), հատ. 5, Դերբայ, նախադրություն, մակրայ, շաղկապ (1965)։ «Ներածությունը»՝ Ներկանակի ընդհանուր լեզվաբանական հայացքների շարադրանքն է։ Լիակատար քերականության հաջորդ՝ «Չայնարանություն» հատորը տպագրվում է։

3 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940; Историко-лингвистическое значение топонимии древней Армении, Ереван, 1940; К происхождению армянского языка, Ереван, 1946; Хайаса—колыбель армян, Ереван, 1947; О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков, Ереван, 1952; Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961 և այլն։

վատարերի՝ բաղադրիչների տեսակարար մեծ կշիռը, նա ընդունում էր, որ հայոց լեզվում համատեղվում են լեզվական տարասեռ նստվածքներ (բաղկացություններ)՝ ասիանիկ, կովկասյան և հնդեվրոպական, որոնցից հիմնականն են առաջին երկուսը («Գերակշռում է ասիանիկ լեզուների բաղկացական բովանդակությունը»), իսկ երրորդը, մանավանդ բառապաշարում, անհամեմատ թույլ է արտահայտված և չի կարող հայերենի ցեղակցության որոշման համար վճռական դեր խաղալ: Գ. Ղափանցյանի կարծիքով, հայոց լեզուն ասիանիկ-կովկասյան-հնդեվրոպական խաչավորված լեզու է, մի տեսակետ, որ հնդեվրոպական հայերենի նկատմամբ ընդունելի չի կարող լինել: Մեզ համար, սակայն, կարևորը ոչ թե այդ տեսությունն ի՞նչ չափով ընդունել-չընդունելու հարցն է, այլ հայերենագիտությանը Ղափանցյանի տրամադրած փաստական առատ նյութը, որ քննադատաբար օգտագործվելու դեպքում կարող է մեծապես նպաստել հայերենի խոր ու բազմակողմանի ուսումնասիրմանը:

Սովետահայ ժամանակակից համեմատական լեզվաբանության մեջ նշանակալից են Գ. Ջահուկյանի հետադուռությունները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում ընդհանրապես հնդեվրոպական հին լեզուների պատմության համար: Իր մի քանի աշխատություններում⁴ հայոց լեզվի հին ու հնագույն շրջանների պատմության, հայերենի և այլ լեզուների փոխհարաբերությունների և շատ ուրիշ ընդհանուր ու մասնավոր բնույթի հարցերի մասին Գ. Ջահուկյանն ասել է իր նոր խոսքը: Հայերենի պատմա-համեմատական քերականության սկզբունքային շատ խնդիրներ նրա ուսումնասիրություններով ստացան նոր մեկնաբանություն, լրացուցիչ փաստերի, լեզվաբանական նորագույն մեթոդների օգտագործմամբ վերանայվեցին ու վերագնահատվեցին լեզվի պատմության մի շարք երևույթներ և այլն:

Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրությունը սովետական տարիներին հասել է լուրջ հաջողությունների: Վստահորեն կարելի է ասել, որ հայ լեզվաբանության այդ բնագավառի բոլոր կարևորագույն խնդիրներն այսօր արդեն մեծագույն մասով քննված են՝ իհարկե տարբեր չափերով ու խորություններ:

Հայոց լեզվի պատմություն. ժամանակակից հայերենագիտության կենտրոնական հարցերից մեկը հայոց լեզվի բազմադարյան պատմության ուսումնասիրությունն է: Սերտերեն կապված ու պայմանավորված հայերենի պատմա-համեմատական քերականության ինչպես սկզբնավորման, այնպես էլ ծավալման հետ, լեզվի գիտական պատմության բնագավառը ևս նախասովետական շուրջ մեկդարյա ժամանակաշրջանում նկատելի հաջողություններ ունեցավ:

Հայերենի պատմական ուսումնասիրությունը սովետական տարիներին թևակոխեց զարգացման նոր փուլ:

Սովետահայ լեզվաբանության մեջ որոշակիորեն ընդարձակվեցին հայերենի պատմության հարցերի շրջանակները, նախկինում առաջ քաշված մի շարք հարցադրումներ ստացան նոր ու համոզիչ պատասխան, շատ պատկե-

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Երևան, 1959; Урартский и индоевропейские языки, Ереван, 1963; Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964; Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967; Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967; Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970:

րացումներ ճշգրտվեցին ու նոր տվյալներով լրացվեցին, առաջադրվեցին նոր խնդիրներ և այլն: Լուծվեցին կամ իրական լուրջ նախադրյալներ ստեղծվեցին այնպիսի սկզբունքային հարցերի լուծման համար, ինչպիսիք են հայերենի պատմության շրջանաբաժանումը, միջին դարական հայերենի հիմքը և հնչյունական ու ձևաբանական համակարգերի առանձնահատկությունները, հայերենի պատմական քերականությունը, պատմական շարահյուսությունը, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների (աշխարհաբարի) ձևավորումն ու զարգացման ընթացքը և այլն: Հայոց լեզվի պատմության կարևոր շատ հարցեր էլ քննարկման նյութ դարձան բարբառների պատմա-համեմատական ուսումնասիրության հետ կապված (հայերենի բաղաձայնական համակարգի ծագումը, համաթողովրդական հայերենի և բարբառների փոխհարաբերությունը և այլն): Գրվեցին ընդհանուր բնույթի ծավալուն մենագրություններ⁵, լեզվական-քերականական ավելի մասնակի խնդիրների նվիրված աշխատություններ⁶, գրաբարի քերականություններ և այլն:

Հայոց լեզվի առանձին իրողությունների պատմությանը նվիրված աշխատությունների մեջ նյութի ամբողջականությամբ (գրաբար, միջին դարական հայերեն, աշխարհաբար, բարբառներ) առանձնանում է Ա. Աբրահամյանի դերբայներին վերաբերող մենագրությունը⁷: Հեղինակը փաստական հարուստ լեզվանյութով առանձին-առանձին քննում է ու բնութագրում հայերենի բոլոր դերբայների ձևա-իմաստային արժեքը, ցույց տալիս դրանց հնագույն գրաստաններն ու պատմական զարգացման օրինաչափությունները, բացահայտում դերբայներից մի քանիսի ձևաբանական կիրառության առանձնահատկությունները և այլն:

Սովետահայ քերականագիտության մեջ գրաբարի քերականական կառուցվածքի ու բառապաշարի նկատմամբ հետաքրքրությունը ավելի ընդարձակվեց: Գրաբարի գիտական ուսումնասիրությունը, արդեն նոր պահանջների ու մոտեցումների թելադրանքով, ստացավ տեսական ու գործնական մեծ նշանակություն: Գրաբարի ձևաբանության և շարահյուսության առանձին հարցեր ենթարկվեցին հատուկ քննության: Ուշագրավ է հատկապես գրաբարյան դասագրքային քերականությունների հրատարակումը սովետական տարիներին⁸:

Գրաբարի բաղմակողմանի քննության մեջ նշանակալից գործ է կատարում է. Աղայանը⁹: Նա փորձեց կառուցվածքային լեզվաբանության մեթոդներով նկարագրել և ուսումնասիրել գրաբարի հնչյութային համակարգը (հնչույ-

5 Ա. Ղ ա ր ի ր յ ա ն, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937: Ա. Ղ ա զ ա ր յ ա ն, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954: Նույնի՝ Հայոց գրական լեզվի պատմություն, հատ. Ա, Երևան, 1961: Դ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:

6 И. К. К у с и к ъ я н, Очерки исторического синтаксиса литературного армянского языка. М., 1959. Ա. Մ ա ր զ ա ր յ ա ն, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966 և այլն:

7 Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Հայերեն դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

8 Մ. Ա լ լ ի յ ա ն, Գրաբարի քերականություն, Երևան, 1936: Վ. Ա ո ա ր է լ յ ա ն, Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց), Երևան, 1945: Ա. Ղ ա զ ա ր յ ա ն, Գրաբարի դասագիրք, Երևան, 1951: Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Գրաբարի ձևաբանություն, 1952 և այլն:

9 Է. Ա զ ա յ ա ն, Գրաբարի քերականություն, հատ. 1, Սինխրոնիա, գիրք Ա, Հնչյունաբանություն, Երևան, 1964:

թաբանությունը), հնչյունախոսությունը, հնչյունափոխությունը և այլն: Այստեղ նոր մեկնակետով բացատրվել ու ճշտվել են գրաբարի հնչյութաբանության շատ հարցեր:

Միջին գրական հայերենի պատմությամբ սովետահայ լեզվաբանները համեմատաբար քիչ են լրացրել: Հ. Աճառյանը անդրադարձել է դրան իր մի քանի աշխատությունների մեջ՝ ընդհանուր հայերենի պատմության հենքի հետ, իսկ մյուսները՝ առանձին հարցերի ուսումնասիրության կապակցությամբ: Առանձնապես հիշատակելի է միջին գրական հայերենի վերաբերյալ Ս. Ղաղարյանի աշխատությունը¹⁰: Դա միջին հայերենի հնչյունական համակարգի նկարագրական (համաժամանակյա) և պատմական (տարածամանակյա) ուսումնասիրությունն է:

Սովետահայ լեզվաբանության ուղադրության առարկան է եղել նաև երկ-ձյուղ աշխարհաբարի ձևավորման ու հետագա զարգացման խնդիրը: Այստեղ էլ վիճելի հարցեր եղել են՝ շրջանաբաժանումը, աշխարհաբար-բարբառներ փոխհարաբերության բնույթը, գրական երկու լեզուների նորմավորման սկզբունքները և այլն: Տպագրվել են մի շարք աշխատություններ¹¹, օրոնց մեջ մեծ մասամբ պատմականության սկզբունքով քննվում են ժամանակակից հայերենի տարբեր փուլերի և լեզվական-քերականական առանձին երևույթների զարգացման ու փոփոխության հետ կապված հարցեր:

Ժամանակակից հայերենի ձևավորման պրոցեսի և զարգացման հետազարնթացքի հետազոտությանն է նվիրված Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը»¹²: Աշխատության մեջ քննված են բաղմաղան հար-տեր՝ աբեղահայ գրական լեզվի պատմության շրջանաբաժանումը, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ, գրապայքար, գրական աշխարհաբարի համակարգը, սովետական շրջանում նկատվող բառապաշարային տեղաշար-ժերը, հայոց լեզվի բառակաշմությունը և այլն: Սույն ուսումնասիրությունը արժեքավոր է նախ և առաջ նրանով, որ սովետական տարիներին աշխարհաբարի պատմությանը նվիրված առաջին աշխատանքն է:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեջ նկատելի առաջընթաց և ակնառու հաջողություններ, իհարկն, ունենք, սակայն կան նաև անհետա-ձգելի անելիքներ: Այսպես՝ ստեղծել հայերենի պատմական քերականություն՝ իր բոլոր բաժիններով. ստեղծել հայոց գրական լեզվի ամբողջական պատմու-թյուն՝ բոլոր փուլերի և ոճերի ընդգրկումով. բարբառների ուսումնասիրության

10 Ս. Ղաղարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960: Նաև նույնի՝ Հայոց լեզվի համառոտ պատմություն: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը տպագրության է հանձնել «Միջին գրական հայերենի պատմության» առաջին հատորը (հնչյունաբանություն, բառագի-տություն, ձևաբանության առանձին բաժիններ): Կոլեկտիվ այդ աշխատանքի երկրորդ հատորը հիմնականում նվիրված է լինելու շարահյուսության հարցերին:

11 Ս. Ղաղարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ուսաց լեզվի դերը նրա հարստաց-ման ու զարգացման մեջ, Երևան, 1955: Н. К. Кусикьян, Изменения в словарном составе литературного армянского языка советского периода, М., 1964: Ս. Ա. Քաղարյան, Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Երևան, 1963: Տ. Ա. Շահբազյան, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Երևան, 1963 և այլն: Լեզվի ինստիտուտը հրատարա-կության է պատրաստել սովետական շրջանում հայերենի կրած փոփոխությունների արտացո-լող ուսումնասիրությունների մի յողովածու, ինչպես նաև արևմտահայ գրական լեզվի պատ-մության ուսումնասիրության մի մասը:

12 Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948:

մեջ առաջնությունը տալ պատմական մոտեցմանը (տարածամանակյա քննություն). խոսքի մասերն ու քերականական կարգերը առանձին-առանձին ուսումնասիրել ժամանակային ողջ երկայնքով ու լրիվ տարածքով՝ ընդ որում շխուսավելով նաև ընդհանուր տիպաբանությունից. արևելահայ և արևմտահայ պրական լեզուների արդի օրինաչափություններից ելնելով՝ պարզել դրանց ընդհանրությունների բնույթն ու աստիճանը և փոխադարձ ներթափանցումների հնարավորությունը. պատմական քննություն կատարելիս, հնարավորության դեպքում ու նպատակահարմարությունից ելնելով, կիրառել նաև լեզվաբանական նորագույն մեթոդներ՝ առավել ճշգրտության հասնելու համար և այլն:

Բարբառագիտություն. Հայ բարբառագիտության, որպես գիտական ինքնուրույն դիսցիպլինի, ստեղծումը կապված է Հ. Աճառյանի անվան հետ. նա իր „Classification des dialectes arméniens“ (Փարիզ, 1909) աշխատության և սրա վերամշակված ու ընդարձակված նոր հրատարակության՝ «Հայ բարբառագիտության» (Նոր Նախիջևան, 1911) մեջ նկարագրեց այն ժամանակ հայտնի մի քանի տասնյակ բարբառներն ու ենթաբարբառները, մշակեց դրանց օննության գիտական սկզբունքներն ու մեթոդները, որոնցով հետագայում առաջնորդվեցին ինչպես ինքը, այնպես էլ մինչև այսօր՝ սովետահայ մյուս բարբառագետները: Հ. Աճառյանի մեծագույն ծառայություններից մեկն այն է, որ առաջինը նա տվեց մեր բարբառների գիտական դասակարգումը, որը հիմնված է ձևաբանական հատկանշի՝ բառի սահմանական եղանակի ներկայի և անցյալի՝ անկատարի կազմության ձևի վրա: Ըստ այդմ էլ առանձնացվեց բարբառների երեք ճյուղ՝ ում, կը և ել:

Հայ բարբառագիտությունը իր իսկական ծաղկումն ապրեց սովետական տարիներին: Այստեղ էլ առաջին հերթին հիշատակելի են Հ. Աճառյանի մենագրական ուսումնասիրությունները¹³, որոնց մեջ կան բարբառագիտական դասական դործեր:

Սովետահայ բարբառագիտությունը ծավալվեց հիմնականում երկու ուղղությամբ՝ առանձին բարբառների համառոտ նկարագրություն կամ մենագրական ուսումնասիրություններ¹⁴ և բարբառագիտական ընդհանուր բնույթի դործեր¹⁵: Ուշադրություն դարձվեց նաև բարբառագիտության տեսության, լեզվա-

13 Հ. Աճառյան, Քննություն նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Երևան, 1925 (ապակետիպ): Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926 (ապակետիպ): Քննություն Աղուլիսի բարբառի, Երևան, 1940 (ապակետիպ): Քննություն Պոլսահայ բարբառի, Երևան, 1941: Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947: Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952: Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953:

14 Հ. Մ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952: Է. Բ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954: Վ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1954: Ա. Ղափրիբյան, Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալյան, Մշո բարբառը, Երևան, 1958: Հ. Դ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960: Նույնի՝ Կաթավարերդի բարբառը, Երևան, 1967: Ս. Մ. Անթոսյան, Կեսարիայի բարբառը, Երևան, 1961 (ապակետիպ): Ռ. Հ. Բաղրամյան, Կոզնի բարբառը, Երևան, 1961 (ապակետիպ): Նույնի՝ Շամախի բարբառը, Երևան, 1964: Մ. Ն. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962: Նույնի՝ Լոռու խոսվածքը, Երևան, 1968: Մ. Հ. Մուրադյան, Շատուխի բարբառը, Երևան, 1962: Ա. Մ. Պողոսյան, Հաղրոթի բարբառը, Երևան, 1965: Հ. Դասպարյան, Հաջրնի բարբառը, Երևան, 1966 (ոտապրինտ): Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Երևան, 1967 (ոտապրինտ):

15 Ա. Ղափրիբյան, Հայ բարբառների մի նոր ճյուղ (Երևանի պետհամալսարանի «Գիտ. աշխատություններ», հատ. 11, 1939): Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան,

բանական աշխարհագրություն¹⁶ հարցերին և այլն: Բարբառային նոր նյութերն ու հետադոտությունները պահանջ առաջադրին որոշ հարցադրումների վերանայման: Առանձնահատուկ նշանակություն ստացան և առաջին պլան մղվեցին այնպիսի խնդիրներ. ինչպես՝ հայերենի բարբառների ծագման ժամանակն ու ուղիները, բարբառների՝ եղած դասակարգման ճշգրտումը, այսպես կոչված, բաղաձայնական համակարգի հայկական տեղաշարժի փաստի գնահատումը պատմա-համեմատական լեզվաբանության տեսանկյունից, մի կողմից՝ բարբառների և գրաբարի, մյուս կողմից՝ սրտնց և հնդեվրոպական նախալեզվի փոխհարաբերության բնույթը և այլն: Բնականաբար, սրանք միանգամից և հեշտությամբ չլուծվող պրոբլեմներ են, որոնք հայերենագիտության, մանավանդ բարբառագիտության սահմաններից բացահայտորեն դուրս են գալիս: Հիշենք թեկուզ հայերենի բարբառների ծագման մասին «Պատմա-բանասիրական հանդես»-ում¹⁷ և «Вопросы языкознания» ամսագրի էջերում շուրջ հինգ տարի տևած վիճաբանությունը, որի թեման էր հայերենի բաղաձայնական համակարգը¹⁸: Առաջին անգամ հայագիտության մեկ պրոբլեմը դարձավ միջազգային լեզվաբանության ընդհանուր քննության առարկա:

Սովետական տարիներին հայ բարբառագիտության մեջ բեղմնավոր աշխատանք է կատարում Ա. Ղարիբջանյ: Հենվելով Աճառյանի առաջարկած ձևավաբանական դասակարգման սկզբունքի վրա, նա իր հայտնաբերած բարբառների լեզվանյութի օգտագործմամբ եռաձյուղ այդ դասակարգմանը նոր տեսք տվեց՝ ընդունելով բարբառային ինքնուրույն յոթ ձյուղ՝ ուս, ս, լ, կա, կը, հա և գրաբարակերպ: Սրանք էլ իրենց հերթին բաժանվեցին երեք խմբի՝ դեբ-բայավոր (ուս, ս, լ), մասնիկավոր (կա, կը, հա) և գրաբարակերպ (միայն հոտորջուրի բարբառում): Նոր որոնումները, սակայն, Ղարիբջանին հանգեցրին նաև բարբառների հնչյունաբանական դասակարգման գաղափարին, որը հեղինակի արժեքավոր ներդրումն է հայ լեզվաբանության մեջ: Դասակարգման համար հիմք ընդունվեց սլավոնական բաղաձայնների համակարգը¹⁹: Ա. Ղարիբջանը քննել է նաև բարբառների ծագման, դրանց աշխարհագրական տեղաբաշխման,

1941: Նյութեր հայ բարբառագիտության, Երևան, 1945: Հայ բարբառագիտություն, Երևան, 1953: Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957: Նաև՝ Ա. Ղարիբջանի, է. Աղայանի, Ս. Ղազարյանի, Գ. Զահուկյանի, Գ. Սևակի և ուրիշների մի շարք հոդվածները:

16 Մասնակի նյութ կա Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտության» և Արմատականի, ինչպես նաև Ա. Ղարիբջանի վերևում նշված առաջին աշխատության մեջ: Որպես նախնական փորձեր տպագրվել են՝ Կ. Ս. Կալթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966: Ռ. Հ. Բաղրամյան, Իերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960:

17 է. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին (1958, № 2): Ա. Ղարիբջան, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը (1958, № 3): Գ. Սևակ, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը (1959, № 1): Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության և հայերենի բարբառների ծագման հարցը (1959, № 2—3): Ս. Ղազարյան, Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը (1960, № 3):

18 «Պատմա-բանասիրական հանդես»-ի բանավեճը Ա. Ղարիբջանի «Об армянском консонантизме» հոդվածով փոխադրվեց «Вопросы языкознания» ամսագրի (1959, № 5): Մասնակցեցին է. Բենվենիստի, Վ. Պիդանին, Վ. Ի. Գևորգիևը, Ժ. Ֆուրկեն, Լ. Զարրոցկին, Ֆ. Ֆելդին, Ու. Ֆ. Լեմանը, Հ. Ֆոգտը, է. Ա. Մակաևը և ուրիշներ. հայ լեզվաբաններից՝ է. Աղայանը և Գ. Զահուկյանը:

19 Ա. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, էջ 57—62: Հնչյունաբանական դասակարգման ավելի հանգամանորեն և որոշ ճշգրտումներով ու հավելումներով հեղինակն անդրադարձել է իր «Об армянском консонантизме» հոդվածում:

բարբառների և գրաբարի բաղաձայնական համակարգերի առնչությունների և այս կարգի այլ հարցեր:

Բարբառների դասակարգման խնդրով զբաղվել է նաև է. Աղայանը²⁰: Նա գտնում է, որ սահմանական եղանակի ներկայի և անցյալի անկատարի կազմության միայն ձևի վրա հիմնված բարբառների բաղաձայնությունից խուսափելու... համար անհրաժեշտ է բարբառների դասակարգման նոր հիմունք գտնել, և այդ հիմունքը լայն սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության եղանակն է, այն սկզբունքը, որ ընկած է այդ ձևերի կազմության հիմքում» (էջ 401—402): Այստեղից ելնելով, նա հայերենի բոլոր բարբառները բաժանում է երկու ճյուղի՝ դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ (ում, ել, ս ենթաճյուղերով) և գրաբարակերպ-մասնականակազմությամբ բարբառներ (կը, կա, հա ենթաճյուղերով): Առաջարկելով իր նոր դասակարգումը, հեղինակը նշում է, որ այդ սխեման որպես ելակետային եզր ունենալով համաժողովրդական հայերենը՝ գրաբարը, պատմականորեն ճիշտ է արտացոլում բարբառային տարբերակումները և ճյուղավորումները, դրանով իսկ՝ նոր հայերեն բարբառների առաջացման պատկերը²¹:

Հանձնված է տպագրության Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը», որտեղ ի տարբերություն հայերենագիտության մեջ մինչև հիմա ընդունված բարբառների միահատկանիշ դասակարգումների (սահմանականի բայաժամանակների կազմության ձևի կամ եղանակի հաշվառում և այլն), հեղինակը առաջարկում է զուգաբանական կամ բաղմահատկանիշ դասակարգում, հիմնված բարբառների հնչյունաբանական և ձևաբանական էական առանձնահատկությունների ընդհանրությունների և տարբերակվածության խտության վրա: Աշխատության մեջ քննված են նաև V դարի բարբառային վիճակը, ժամանակակից հայ բարբառների միջև ժամանակագրական փոխհարաբերությունը (լեզվա-ժամանակայրական մեթոդի գործադրում), բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում և այլն:

Սովետահայ բարբառագիտությունն ունի իր առաջնահերթ խնդիրները. հասկանալի է, որ մի 10—15 տարի հետո բարբառագետների գործը անչափ կդժվարանա. անաղարտ բարբառախոս գտնելը գործնականորեն կդառնա անհնարին: Այսօր, իհարկե, զգալի բան է արվում կորչող բարբառային լեզվա-նյութի հավաքման ուղղությամբ: Հարկավոր է այդ գործն ալելի ընդլայնել՝ անշուշտ չմոռանալով նաև որակի ու հավաստիության մասին: Չափազանց կարևոր է նաև նոր մեթոդների արմատավորումը, որ ժամանակի հրամայական սահանջն է:

Ժամանակակից հայոց լեզվի բերականական կառուցվածքի, բառային կազմի ուսումնասիրության և լեզվի տեսության հարցեր. Ստ. Պալասյանը: Հիմք դրեց ժամանակակից արևելահայ գրական լեզվի դիտական ուսումնասիրությանը, Մ. Աբեղյանն այն ալելի խորացրեց. նա ստեղծեց արգի հայերենի դիտական քերականությունը: Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը» (Վաղարշապատ, 1912) և «Հայոց լեզվի տեսությունը» (Երևան, 1931)²² հայ քերականագիտության հոյակապ ստեղծագործություններից են, իսկ դրանց

20 է. Բ. Աղայան, Մեղրու բարբառու: Հնդհանուր բարբառագիտության և հայերենի բարբառների պատմության հարցերին նա անդրադարձել է նաև իր մի քանի այլ գործերում:

21 Տե՛ս ՍՊատմա-բանասիրական հանդես, 1958, № 2, էջ 231:

22 Երկուսը միասին վերահրատարակվեցին 1965 թ.:

հեղինակը՝ գրական արևելահայերենի ամենափայլուն և համապարփակ ուսումնասիրողն ու սիստեմավորողը: Նա դարձավ հայ քերականագիտության մի շարք նոր ճյուղերի հիմնադիրը (հնչյունաբանություն, բառագիտություն՝ իմաստաբանությամբ ու բառակազմությամբ հանդերձ և այլն):

Ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության և տեսության բնագավառում զգալի ներդրում ունի նաև Գ. Սևակը: Նրա «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը»²³ հայերենագիտության կարևոր գործերից է ամենից առաջ իր բերած նորություններով և լեզվի տեսության մի շարք հարցերի մարքսիստական լուսաբանությամբ (խոսքի մասերի որոշման հիմունքը, դերանվան լեհինյան հասկացությունը և այլն): Հեղինակը, Մ. Աբեղյանի հետևողությամբ, սակայն որոշ խնդիրներում բոլորովին ինքնատիպ, ժամանակակից հայերենը քննում է իր ամբողջության մեջ՝ քերականական վերլուծություններին ղուգակցելով նաև տեսական բնույթի մեկնաբանություններ: Կարևոր նորություն բերեց Գ. Սևակը հնչյութի և ձևույթի տեսությունների մեջ՝ դրանք դարձնելով ավելի հստակ ու մշակված:

Սովետահայ լեզվաբանությունը լուրջ հաջողությունների հասավ ժամանակակից գրական արևելահայերենի քերականական կառուցվածքի և բառային կազմի ուսումնասիրության գործում՝ հատկապես 1950 թ. լեզվաբանական հայտնի բանավեճից հետո, երբ «լեզվի նոր ուսմունքի» կաշկանդիչ ազդեցությունը վերացավ, իսկ սրան փոխարինած դոգմատիզմը բարեբախտաբար երկար չտևեց: Անցյալի ժառանգության լավագույն ավանդների քննադատական օգտագործումով, ղինված նաև մարքսիստական մեթոդաբանությամբ, հայ լեզվաբանները մշակեցին քերականագիտության հիմնական սկզբունքները, առաջադրեցին տեսական և գործնական բնույթի հանգուցային շատ հարցեր, ձևաբանական և շարահյուսական առանձին երևույթներ մեկնաբանեցին նոր մոտեցմամբ, կիրառեցին լեզվաբանական վերլուծության նորագույն մեթոդներ և այլն: Բավական կարճ ժամանակամիջոցում հրապարակ եկան տասնչափ մեհագրական ուսումնասիրություններ՝ նվիրված արդի հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերին, շարահյուսական կառուցվածքին, հնչյունաբանությանը, բառապաշարին:

Ձևաբանական կարգերից առանձնապես մանրամասն հետազոտվեց բայն իր խոնարհումով²⁴: Այստեղ չի կարելի չառանձնացնել Ա. Աբրահամյանի աշխատությունը, ուր քննվում են կարևորագույն շատ հարցեր՝ բայը և նրա խոսքի մասային ու բառական բնույթը, արդի հայերենի բայական բառույթի կազմության առանձնահատկությունները, բայականության տիպերը, դերբայների տեսակները ժամանակակից հայերենում, բայական սեռի քերականական կար-

23 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955: Թեթև մշակումներով, մասնակի հավելումներով և նյութի որոշ վերաբաշխումով սա ամփոփում է հեղինակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսությունը» (գիրք Ա, Երևան, 1939, գիրք Բ, 1947):

24 Հ. Ն. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953: Մ. Ա. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959: Ա. Ա. Արրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Երևան, 1962: Իվ. Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները («Լեզվի և ոճի հարցեր», Ժողովածու, հատ. 2, Երևան, 1964) և այլն:

Հայ. քերականագիտության ուշագրավ էջերից մեկն է արդի արևելահայ գրական լեզվի բայի խոնարհման համակարգին նվիրված 1968 թ. բանավեճը, որ կազմակերպվեց Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ:

բանական ծանրակշիռ աշխատանք է Վ. Ասաբեկյանի երկհատոր շարահյուսությունը, որի մեջ հանդամանորեն հետալուծված են պարզ նախադասությունն իր տեսակներով, պարզ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների խմբերն ու կիրառական-ֆունկցիոնալ առանձնահատկությունները, երկրորդական նախադասությունների բնույթը, շաղկապավոր երկրորդական նախադասությունները. բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասությունների շարահյուսական կառուցվածքը և այլն:

Վերջին տարիներս դրական առաջին քայլերն են արվում կառուցվածքային լեզվաբանության որոշ մեթոդներով ժամանակակից հայերենի շարահյուսությունը ուսումնասիրելու ուղղությամբ³⁰: Կառուցվածքային շարահյուսության տեսական հիմունքների մշակման բնադավառում ուշագրավ են է. Աթայանի հետալուծությունները³¹:

Հետաքրքրական աշխատություններ են տպագրվել նաև ժամանակակից հայերենի հնչյունաբանության, ինչպես և բառապաշարի ու բառակազմության վերաբերյալ³²: Սովետահայ լեզվաբանության զարգացման հեռանկարների տեսակետից կարևոր նշանակություն ունեն փորձառական հնչյունաբանական և հնչյութաբանական հետալուծությունները, որ կատարվում են Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառական լաբորատորիայում: Տպագրության է հանձնված կոլեկտիվ մի աշխատանք, որ նվիրված է դրական հայերենի բաղաձայնների բաշխումային և փորձառական վերլուծությանը:

Ժամանակակից հայոց լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրության ուղղությամբ լույս են տեսել է. Աղայանի և Գ. Ջահուկյանի աշխատությունները³³: է. Աղայանի աշխատությունը կառուցվածքային լեզվաբանության դիրքերից ժամանակակից հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի նկարագրության և վերլուծության առաջին փորձերից է: Նա քննում է ոչ միայն հայերենագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության մեջ դեռևս վիճելի ու նոր մեկնաբանությունների կարևոր մի շարք հարցեր, որոնք կապված են հոլովի ըմբռնման, հոլովների թվի ու հոլովման տիպերի, հոլովական ձևերի և դրանց միջև եղած փոխհարաբերությունների, բայի կերպի քերականական կարգի, դերբայական և եղանակային կազմությունների ձևա-իմաստային առանձնահատկությունների և այլ խնդիրների հետ:

Գ. Ջահուկյանի ուսումնասիրության մեջ կիրառված են լեզվաբանական նորագույն մեթոդներ: Ստացված արդյունքներից շատերը արժանի են լուրջ ուշադրության և հետագա ուսումնասիրության: Հեղինակը հայ քերականագիտության մեջ մտցնում է նոր հասկացություններ ու համապատասխան տեր-

30 Յ. Բ. М и р а к я н, Испытание гипотезы В. Нигве на материале армянского языка, Ереван, 1968 (ոտապրիետ): Աշխատությունը նվիրված է պարզ նախադասության անվանական խմբի անդամների շարահյուսական կառուցվածքի նկարագրությանը:

31 Յ. Բ. А т а я н, Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964: Նույնի՝ Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968.

32 Վ. Ա ս ա բ ե կ յ ա ն, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955: Ա. Ա. Մ ո ռ Վ ա լ յ ա ն, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955: Ա. Մ. Ա Ր ա մ յ ա ն, Ժամանակակից հայերենի ձայնավորները (փորձառական ուսումնասիրություն), Երևան, 1962: Ս. է լ ո յ ա ն, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963 և այլն:

33 Հ. Բ. Աղ ա յ ա ն, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), Երևան, 1967: Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

մինաբանություն, առանձնացնում անվանական և բայական քերականական նոր կարգեր (դասի. առկայացման, տիպարի և այլն):

Բառաբանագրություն. Հայ դարավոր բառարանագրության իսկական ծաղկումը կապված է սովետական տարիների հետ: Երկրի կյանքում տեղի ունեցած արմատական վերափոխումները բառարանագրության առջև տեսական ու գործնական նորանոր խնդիրներ դրեցին. բառարանագրական աշխատանքը նոր առաջընթաց ապրեց: Սովետահայ բառարանագրությունը հարստացավ նոր տիպի բառարաններով, նրա թեմատիկան դարձավ ավելի բազմազան: Բառարանագրությունը տրվեց պետական կարևորություն:

Ինչպես հայերենագիտության, այնպես էլ սովետական և համաշխարհային բառարանագրության մեջ աննախադեպ երևույթ էր Հ. Աճառյանի բազմահատոր «Արմատական բառարանը»³⁴, ուր ամենայն մանրամասնությամբ քննված են հայոց լեզվի շուրջ տասնմեկ հազար իրական բառարմատներ (ամեն մի արմատի նկարագրությունը կատարվում է հինգ բաժիններով՝ բառագիտություն, ստուգաբանություն, ստուգաբանությունների պատմություն, գավառական բառեր, հայերենից փոխառյալ բառեր): Արմատական բառարանը դարձավ մինչև XX դարի 30-ական թթ. կատարված հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության արդյունքների ամփոփումը և ապացույցը եղավ այն բանի, որ հայ լեզվաբանության ճյուղերից մեկը՝ ստուգաբանությունը, օտարազգի և հայ գիտնականների ջանքերով հասել էր իր ժամանակի դիտական մտքի ամենաբարձր աստիճանին:

Հ. Աճառյանի բառարանագրական ժառանգության մեջ ուրույն տեղ է զբաղում նաև «Անձնանունների բառարանը»³⁵, որը հայ լեզվաբանության, հայոց պատմության և հայ բանասիրության համար մեծ նշանակություն ունեցող լեզվաբանական-բանասիրական մի աշխատություն է:

Սովետական հայ լեզվաբանության խոշոր նվաճումներից մեկն էլ Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարան» է³⁶: Հեղինակի մտահղացմամբ, այս բառարանը «պետք է փոխարինե բոլոր լույս տեսած հայերեն բառարանները՝ միասին վերցրած և ավելի լայն չափով ու մանրամասնորեն»: Այն իր տեսակի մեջ մեզանում առաջինն էր և լայնօր էլ բառարանագրության և բառագիտության շատ հարցերում պահպանել է իր առաջնային դերը: Ստ. Մալխասյանցը, սակայն, գիտեր, որ այս բառարանը չի սպառում հայոց լեզվի բառամթերքի ողջ հարստությունը: Նա գրում էր. «Տասնյակ հազարավոր բառեր կան թաղված մեր նոր զրականության և պարբերական մամուլի մեջ, որոնք դեռ բխտ չեն ունեցել որևէ բառարանի մեջ մտնելու»: Նաև՝ «...այս բառարանը ես նկատում եմ իբրև մի նախապատրաստական աշխատանք՝ լիակատար հայերեն բառարան կազմելու: Նա հետզհետե պետք է լրանա ու ճշգրտվի հաջորդ հրատարակությունների մեջ կամ ուրիշ՝ նորագույն բառարաններով»:

34 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան. հատ. 1—7, Երևան, 1926—1935: Բառարանի վեց հիմնական հատորները լույս են ընծայվել ապակետիպով: Այժմ Երևանի պետական համալսարանը պատրաստում է «Արմատական բառարանի» նոր հրատարակությունը սովորական տպագրությամբ:

35 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա—Ե, Երևան, 1942—1962:

36 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1—4, Երևան, 1944—1945: Լուսատիպով վերահրատարակվել է Բեյրութում (1955—1956):

Լեզվի բառային կազմը շարժուն է ու հարափոփոխ (նոր բառակերտումներ, փոխառություններ, «հնացած» բառերի ու հին իմաստների կորուստ, նորերի տարածում կամ աշխուժացում և այլն)։ Բացատրական բառարաններն սուղին են արտացոլում ու գրանցում այս փոփոխությունները։ Այստեղից էլ՝ դրանց մշտական վերանորոգման ու թարմացման պահանջը։ Վերջին բանաստեղծական տարիների ընթացքում ժամանակակից արևելահայ գրական լեզվի բառային կազմում տեղի ունեցան նկատելի փոփոխություններ։ Ստ. Մալխասյանցի բառարանը հասկանալի պատճառով այլևս չէր կարող բավարարել մերժյա պահանջները։ Եվ Հայաստանի Կոմկոմիտեի ակադեմիայի լեզվի ինստիտուտը ձեռնարկեց ժամանակակից հայոց լեզվի բացատրական բազմաձև առոր նոր բառարանի³⁷ կազմության գործը։ Նոր բացատրական իրավամբ կարելի է համարել վերջին տասնամյակի սովետահայ լեզվաբանության աչքի ընկնող հաջողություններից մեկը։

Բացատրական նոր բառարանի ամբողջական հրատարակումը դրա անընդհատ հավելումներով, ճշգրտումներով, բառարանագրական մեթոդների ու տեխնիկայի հետագա մշակմամբ և այլն, իրական հիմքեր կտա ոչ հեռավոր ապագայում մտածելու հայոց լեզվի բացատրական լիակատար (ակադեմիական) բառարան ստեղծելու մասին։

Հայ բառարանագրության հիմնական բնագավառներից մեկը ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանների կազմությունն է։ Այստեղ ևս մենք հարուստ ավանդներ ունենք (Հ. Դադբաշյան և ուրիշներ)։ Սովետական տարիներին ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանագրությունն ստացավ և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն։ Բառարանագրության այս բնագավառում մեծ վաստակ ունեն Թ. Ավդալբեգյանը, Ե. Տեր-Մինասյանը, Պ. Սոտնիկյանը, Վ. Փոթեյանը, Մ. Գևորգյանը։

Երկլեզվյան թարգմանական-բացատրական բառարան է լեզվի ինստիտուտի քառահատոր ռուս-հայերեն բառարանը (Երևան, 1954—1958), որն իր թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, լուրջ ներդրում է հայ լեզվաբանության մեջ։

Ռուս-հայերեն բառարանագրության բարձր մակարդակի արտահայտություններից է Ա. Ղարիբյանի մեկհատորյա ծավալուն բառարանը³⁸։

Սովետահայ լեզվաբանության հետաքրքրական երևույթներից է նաև Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանը³⁹, որի մեջ փորձ է արված ի մի բերելու հայերենի բոլոր հատվածների մերձավոր կամ հեռավոր հոմանշություն ունեցող բառերը (83.000 բառ և դարձվածաբանական միավոր)։ Սույն բառարանն իր ընդարձակածավալությամբ իսկ արժեքավոր է և որոշ սկզբունքների վերանայման դեպքում անպայման կարող է կայուն հիմք դառնալ այս ուղղության մեջ հետագայում տարվելիք աշխատանքների։

Սովետահայ բառարանագրությունը հաջողություններ ունի նաև մասնագիտական-տերմինաբանական բառարանների ստեղծման գործում։ Հրատարակվել են ռուս-հայերեն ռազմական, երկաթուղային, իրավաբանական, տրն-

³⁷ Հ ե ղ ի ն ա կ ն ե Ր ի կ ո լ ե կ տ ի վ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 1 (Ա—Ե), Երևան, 1969։ Բառարանի երկրորդ հատորը տպագրվում է։

³⁸ Ա. Ս. Ղ ա Ր ի Բ յ ա ն, Ռուս-հայերեն բառարան, մեկ հատորով, Երևան, 1968։

³⁹ Ա. Մ. Ս ու ք ի ա ս յ ա ն, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967։

տեսապահական, աշխատանքային, պոլիտեխնիկական, պոլիգրաֆիական, մաթեմատիկական, բուսաբանական և այլ մասնագիտությունների զծով բառարաններ, որոնցից մի քանիսը հայերենի տերմինաբանության մշակման համար ունեցան և այժմ էլ ունեն կարևոր նշանակություն:

Այսօր մենք ունենք արդեն ավարտված և տպագրության պատրաստ մի շարք բառարաններ⁴⁰, կամ դեռ կազմության ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ⁴¹, որոնք բազմադարյան հայ բուսաբանագիտությունը կհարստացնեն նոր բաժիններով:

Ընդհանուր լեզվաբանություն. Սովետահայ ընդհանուր լեզվաբանության հիմնադիրն իրավամբ համարվում է Գ. Ղափանցյանը: Նա հայ իրականության մեջ առաջինն էր, որ սովեց այդ դիսցիպլինի շարադրանքը⁴² Դ. Ղափանցյանը հանգամանորեն քննել է հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառագիտությունը (իմաստաբանության հետ)՝ հիմնական շեշտը դնելով հայոց լեզվանյութի վերլուծության վրա: Հետևելով իր ուսուցիչ Բոգոլեն դե Կուրտենենին, մեզանում առաջին անգամ նա քննեց հնչույթի տեսությունը և տարբերակեց հնչյունն ու հնչույթը՝ դրանով իսկ սովետահայ լեզվաբանության մեջ հնչույթաբանության սկիզբը դնելով: Նա էր, որ հայերենագիտության մեջ առաջին անգամ որոշակի տարբերակում մտցրեց ընդհանրապես լեզվական ձևի և ձևույթի (իր տերմինով՝ մորֆեմա) միջև Գ. Ղափանցյանը շատ հարցերի տվեց սպառիչ պատասխան, երբեմն նույնիսկ կանխելով հետագա ուսումնասիրողներին:

Ընդհանուր լեզվաբանության և լեզվի տեսության բազմաթիվ հարցեր է շոշափել նաև Հ. Աճառյանը հայերենագիտական իր ուսումնասիրությունների մեջ: Ամբողջական ձևով դրանք ներկայացված են «Լիակատար քերականության» «ներածություն» հատորում, որն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության գրեթե բոլոր հիմնական խնդիրները:

Ընդհանուր լեզվաբանության մասնավոր որոշ հարցերի իրենց հոգվածներում ու աշխատություններում անդրադարձել են նաև Գ. Սևակը⁴³, Գ. Զա-

40 «Լեզվաբանական բառարան» (Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարապետյան), լ. 1, Երևան, 1939: Գրքի մի հատվածը՝ ներածական-ընդհանուր մասը և հնչյունաբանությունը, հրատարակվել է 1937 թ.: Հեղինակի հայացքները շարադրված են նաև մի շարք հոգված-ուսումնասիրություններում՝ «Հարկական լեզվաբանությունն ու տեսությունը» (Երևանի պետական լսարանի «Գիտ. տեղեկագիր», 1927, № 2—3), «Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը» («Նոր ուղի», 1931, № 5), «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզվի զարգացման ստորադասականության մասին» Մոսկի հայացքների քննադատությունը» (Երևան, 1951) և այլն:

41 Լեզվի ինստիտուտի գավառական, ժամանակակից հայոց լեզվի հաճախականության շրջուն և զրաբար-աշխարհաբար-ուսանելի բառարանները:

42 Գ. Դ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հատ. 1, Երևան, 1939: Գրքի մի հատվածը՝ ներածական-ընդհանուր մասը և հնչյունաբանությունը, հրատարակվել է 1937 թ.: Հեղինակի հայացքները շարադրված են նաև մի շարք հոգված-ուսումնասիրություններում՝ «Հարկական լեզվաբանությունն ու տեսությունը» (Երևանի պետական լսարանի «Գիտ. տեղեկագիր», 1927, № 2—3), «Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը» («Նոր ուղի», 1931, № 5), «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզվի զարգացման ստորադասականության մասին» Մոսկի հայացքների քննադատությունը» (Երևան, 1951) և այլն:

43 «Հարկական լեզվաբանություն և մարքսիզմ» («Նոր ուղի», 1930, № 6), «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» («Գրական թերթ», 1932, № 8), «Լենինը և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ» (Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի «Տեղեկագիր», 1934, № 1), «Նոսթալիզմի ուսմունքը» (Երևանի պետական լսարանի «Գիտ. աշխատություններ», հատ. 11, 1939) և այլն, որոնց մեջ նա փորձում է քննադատաբար վերադնաշատել անցյալի ժողովրդականությունը և ն. Մոսկի ուսմունքը՝ մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունների հիման վրա շարադրելով լեզվաբանական տեսության իր մի քանի ըմբռնումները:

հուկյանը և ուրիշները Այս բնագավառում լզալի ծառայություն ունի հատկապես է. Աղայանը՝ Նրա «Լեզվաբանության ներածություն» բուհական ծավալուն դասագիրքը⁴⁴ ամփոփում է առարկայի ամբողջական շարադրանքը, Հրատարակությունից հրատարակություն դասագիրքը գիտական առումով մշակվել ու կատարելագործվել է՝ արտացոլելով լեզվաբանության ամենավերջին շրջանի նորություններին շատերը ևս:

Վերջին տարիներս, հատկապես լեզվաբանական նորագույն ուղղությունների նկատմամբ համընդհանուր հետաքրքրության աճի հետ կապված, մեզանում ևս կատարվեց, թեև սակավ, բայց ուշադրության արժանի գործ: Մեր փիլիսոփաներից ոմանք անմասն չմնացին այս աշխատանքից: Պրոֆեսորային որոշ հարցերի վերաբերյալ զրվեցին մենագրական ուսումնասիրություններ⁴⁵, որոնք աչքի են ընկնում բարձր մակարդակով և ստացված արդյունքների կարևորությամբ: Հետաքրքրական գործ է նաև Ա. Ղարիբյանի մանկավարժական լեզվաբանությունը⁴⁶:

Լեզվաբանության, հայ բերականագիտության և բառաբանագրության պատմություն. Լեզվի մասին դիտության ամբողջական պատմության ստեղծումը հայ իրականության մեջ հնարավոր դարձավ միայն մեր ժամանակներում: Լեզվաբանության պատմության հարցերը դարձան լայն քննարկման ելույթ. ստեղծվեցին մենագրական աշխատություններ⁴⁷, զրվեցին բազմաթիվ հոդվածներ, կոնկրետ քերականագիտական կամ այլ բնույթի ուսումնասիրություններում տրվեցին տվյալ հարցի պատմության ծավալուն ակնարկներ և այլն:

Սովետական տարիներին հայ բառաբանագրության ընդհանուր զարգացմամբ պետք է բացատրել այդ բնագավառի դարավոր պատմության նկատմամբ առաջացած հետաքրքրությունը: Գասպարյանի և Հ. Ամալյանի ուսումնասիրություններով հայ բառաբանագրության պատմության գիտական շարադրանքը հիմնականում ամբողջանում է:

Սովետահայ լեզվաբանությունն սնցած հիսուն տարիների ընթացքում ունեցել է նշանակալից հաջողություններ՝ առավել բարձր գիտական մակարդակի հասցնելով ու հարստացնելով դասական հայերենագիտության մի շարք

44 1947 թ. լույս տեսավ է. Աղայանի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը» (ըստ «Եղվի նոր ուսմունքի»): Լեզվաբանական հայտերի բանավեճից հետո, 1952 թ. հրատարակվեց հիմնովին վերակառուցված՝ «Լեզվաբանության ներածություն» վերնադրով: Ապա ունեցավ վերամշակված ևս երկու հրատարակություն (1963 և 1967): Թարգմանվել է նաև ռուսերեն (Երևան, 1960):

45 Մ. Ա. Աբրահյան, Гносеологические проблемы теории знаков. Ереван, 1965; Յ. Գ. Ավեդյան, Природа лингвистического знака, Ереван, 1968 և այլն:

46 Ա. Ղարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանություն, գիրք 1. Ներածություն: Օժանդակ ձևերով մանկավարժական բուհերի ուսանողների և ուսուցչության համար, Երևան, 1969:

47 Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954: Նույնի՝ Լեզվաբանության պատմություն, հատ. 1—2, Երևան, 1960—1962: է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1—2, Երևան, 1958—1962: Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962: Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառաբանագրական հուշարձանները (V—XV դդ.), Երևան, 1960, Գ. Կ. Գասպարյան, Հայ բառաբանագրության պատմություն, Երևան, 1968:

ճյուղերը: Սովետական շրջանում հայ լեզվաբանության մեջ սկզբնավորվեցին ու զարգացան նոր բնագավառներ, շատ սովելի բնդարձակվեցին հայերենի տա-
րաժամանակյա և համաժամանակյա ուսումնասիրության սահմանները, լեզվի
հետազոտության մեջ հաջողությամբ մուտք գործեցին նորագույն մեթոդներ,
դրականորեն լուծվեցին հայերենի պատմության կնճռոտ մի շարք հարցեր, ամ-
բողջացավ հայերենի պատմա-համեմատական քերականությունը, ավելի լայն
ծավալ ստացավ բարբառների հավաքման և ուսումնասիրության աշխատանքը,
կատարելագործվեց տեսական բարբառագիտությունը, իրականացվեց բառա-
րանագրական մի մեծ ծրագիր, իրական հնարավորություններ առաջացան
ստեղծելու հայոց լեզվի պատմական և ժամանակակից հայերենի գիտական
քերականությունները և այլն: